ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱԶԱՏՎԱԾ Է ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

Նախագծերի նպատակը ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող՝ էլեկտրական ծխախոտի արտադրանքի՝ ակցիզային հարկով հարկումը, ինչպես նաև այն դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանք սահմանելն ու «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված որոշ ապրանքների ներմուծման ժամանակ ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության հետ կապված խնդիրների կարգավորումն է: Միաժամանակ, ԵՏՀ խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը և միասնական մաքսային սակագինը հաստատելու, ինչպես նաև ԵՏՀ խորհրդի որոշ որոշումները փոփոխելու և ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ» թիվ 80 որոշմամբ հաստատվել է ապրանքային նոր անվանացանկը՝ հիմնված ապրանքների նկարագրման և ծածկագրման Ներդաշնակ Համակարգի 7-րդ հրատարակության վրա, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) ԱՏԳ ԱԱ ծածկագրերը ներդաշնակեցնել ԵՏՀ խորհրդի որոշմամբ սահմանված նոր անվանացանկի հետ:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Գործող օրենսդրությամբ ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող՝ էլեկտրական ծխախոտի արտադրանքը ակցիզային հարկով չի հարկվում, սակայն այն նույնպես վնասակար է մարդու առողջության համար:

Բացի այդ, այս ապրանքներն ակցիզային հարկով չհարկելու արդյունքում անհավասար մրցակցային պայմաններ են ստեղծվում այդ ապրանքները ներմուծող տնտեսավարող սուբյեկտների և ԱՏԳ ԱԱ այլ ծածկագրերին դասվող՝ ծխախոտի արտադրանք արտադրող և ներմուծող տնտեսավարող սուբյեկտների միջև:

Ավելին, ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող՝ էլեկտրական ծխախոտի արտադրանքն ակցիզային հարկով չհարկելու արդյունքում նաև նվազում են ԱՏԳ ԱԱ այլ ծածկագրերին դասվող՝ ծխախոտի արտադրանքի սպառման ծավալները, ինչը հանգեցնում է պետական բյուջեի եկամուտների կրճատման:

Ընդ որում, միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ էլեկտրական ծխախոտի արտադրանքի՝ ակցիզային հարկով հարկումը բավական տարածված է: Մասնավորապես, էլեկտրական ծխախոտի արտադրանքը ակցիզային հարկով հարկվում է Ռուսաստանի Դաշնությունում, Ղազախստանում, Վրաստանում, Պորտուգալիայում, Լատվիայում, Նորվեգիայում, Իտալիայում, Գերմանիայում, Էստոնիայում, Լիտվայում, Լեհաստանում և այլ երկրներում:

Բացի այդ, սիդրի 1 լիտրի համար սահմանված՝ ակցիզային հարկի 270 դրամ դրույքաչափը բարձր է այլ՝ համադրելի խմիչքների 1 լիտրի համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերից, ինչի արդյունքում սիդրի արտադրությամբ կամ ներմուծմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները հայտնվում են անհավասար մրցակցային պայմաններում:

Միաժամանակ, գործող հարկային օրենսգրքով բացակայում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ միջազգային պայմանագրերով սահմանված հարկային արտոնությունների կիրառության կարգը Կառավարության կողմից սահմանելու լիազորող նորմը, ինչի հետևանքով հնարավոր չի լինելու վերանայել գործող կարգերով ամրագրված կարգավորումները կամ նոր վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված արտոնությունների մասով սահմանել արտոնությունների կիրառության նոր կարգեր:

Բացի այդ, կոկոսի մանրաթելի սուբստրատի ներմուծումներն իրականացվել են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 5305 00 000 0 ծածկագրով, որը ազատված է ԱԱՀ-ից: Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 35/12 որոշմամբ կոկոսի մանրաթելի սուբստրատը սկսել է

դասակարգել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1404 ապրանքային դիրքի ծածկագրով, ինչի արդյունքում ստացվել է այնպես, որ նշյալ ապրանքների ներմուծումն ազատված չէ ԱԱՀ-ից:

ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2015 թվականի փետրվարի 2-ի «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-5-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածով «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ և ԱՏԳ ԱԱ 88 ծածկագրին դասվող ապրանքային խմբի մասով սահմանվել է հետևյալ խմբագրությունը՝

88	Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր
8802	Թռչող այլ ապարատներ, տիեզերական ապարատներ
8803	Մասեր՝ 8801 կամ 8802 ապրանքային դիրքերում նշված թռչող ապարատների
8804 00 000 0	Պարաշյուտներ և դրանց մասեր:

Վերոնշյալ՝ ՀՕ-5-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ սահմանվել է, որ նույն օրենքի 1-ին հոդվածի ցանկում ներառված՝ ԱՏԳ ԱԱ 8802, 8803, 8804 00 000 0 ապրանքային դիրքի տողերի մասով նախատեսված արտոնությունը գործում է մինչև 2019 թվականի ավարտը:

Արդյունքում, ստեղծվել է մի իրավիճակ, որ ԱՏԳ ԱԱ 88 ապրանքային խմբում ներառված որոշ ապրանքների ներմուծման համար մի կողմից սահմանված է ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառման որոշակի ժամկետ (մինչև 2019 թվականի ավարտը), իսկ մյուս կողմից նույն օրենքով այդ ապրանքները, հանդիսանալով 88 ապրանքային խմբում ներառված ապրանքներ դրանց ներմուծումն ազատված է ԱԱՀ-ի վճարումից:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է՝

1) ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող՝ էլեկտրական ծխախոտը հարկել ակցիզային հարկով՝ 2022 թվականի ընթացքում 1 միլիլիտրը 50 դրամ դրույքաչափով, իսկ 2023 թվականի ընթացքում՝ 1 միլիլիտրը 55 դրամ դրույքաչափով: Բացի այդ, առաջարկվում է սահմանել, որ այդ ապրանքները ենթակա են դրոշմապիտակներով դրոշմավորման: Դրույքաչափը հաշվարկվել է՝ հաշվի առնելով ինչպես հարևան, այնպես էլ այլ երկրներում գործող դրույքաչափերը, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ այլ ծածկագրերին դասվող ծխախոտի արտադրանքի համար գործող օրենսդրությամբ սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը,

2) ճգրտել որոշ ապրանքատեսակների ԱՏԳ ԱԱ ծածկագրերը,

3) հավասարեցնել ԱՏԳ ԱԱ 2206 ծածկագրին դասվող սիդրի և նույն ծածկագրին դասվող այլ՝ համադրելի խմիչքների ակցիզային հարկի դրույքաչափերը,

4) Օրենսգրքով Կառավարությանն իրավասություն վերապահել՝ սահմանել ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված հարկային արտոնությունների կիրառության կարգեր:

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է՝

1) 1-ին հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված ցանկից հանել ԱՏԳ ԱԱ 84 և 85 ապրանքային խմբերում ներառված ապրանքատեսակները, քանի որ այդ ապրանքների ներմուծումն, արդեն իսկ Օրենքի 1-ին հոդվածի չորրորդ պարբերությամբ ազատված է ԱԱՀ-ից,

2) Օրենքի 1-ին հոդվածով սահմանված ապրանքատեսակների ցանկում ներառված՝ ԱՏԳ ԱԱ 940600 ծածկագիրը համապատասխանեցնել ԵՏՀ խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 80 որոշմամբ հաստատված ԱՏԳ ԱԱ ծածկագրին,

3) սահմանել, որ ԱՏԳ ԱԱ 1404 90 000 8 ծածկագրին դասվող՝ այլ (կոկոսի մանրաթելի սուբստրատ, հումքի տեսքով կոկոսի մանրաթելի և կեղևից առանձին կոկոսի մանրաթելի խառնուրդ, որը նախատեսված է տարբեր բույսերի աճեցման համար) ապրանքների

ներմուծումն ազատվում է ԱԱՀ-ից: Ընդ որում, առաջարկվում է սահմանել, որ այս փոփոխության գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա,

4) հստակեցնել, որ ԱՏԳ ԱԱ 88 ապրանքային խմբում ներառված թռչող ապարատների, տիեզերական ապարատների և դրանց մասերի ներմուծումն ազատվում է ԱԱՀ-ից և վերացնել օրենքում առկա հակասությունը: Ընդ որում, առաջարկվում է սահմանել, որ այս փոփոխության գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ այն պահից սկսած, երբ առաջացել է նշված հակասությունը:

4. Կարգավորման առարկան.

Նախագծերի կարգավորման առարկան ծխախոտի արտադրանք համարվող տարբեր ապրանքատեսակների՝ ակցիզային հարկով հարկման մոտեցումների վերանայումը, Օրենսգրքով նախատեսված ԱՏԳ ԱԱ ծածկագրերը ԵՏՀ խորհրդի որոշմամբ սահմանված նոր անվանացանկի հետ ներդաշնակեցնելը, ինչպես նաև որոշ ապրանքների ներմուծումն ԱԱՀ-ից ազատելու հետ կապված խնդիրների կարգավորումն է:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք. Նախագծերը մշակվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

6. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է՝

1) ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող՝ էլեկտրական ծխախոտի արտադրանքը հարկել ակցիզային հարկով, ինչպես նաև այն սահմանել որպես - դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանք,

2) Օրենսգրքով նախատեսված ԱՏԳ ԱԱ ծածկագրերը ներդաշնակեցնել ԵՏՀ խորհրդի որոշմամբ սահմանված նոր անվանացանկի հետ,

3) հստակեցնել ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ԱՏԳ ԱԱ 84 և 85 ապրանքային խմբում ներառված ապրանքների ներմուծման մասով Օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված ցանկի և նույն հոդվածի չորրորդ պարբերության կիրառման հետ կապված հարցերը,

4) Օրենքի 1-ին հոդվածով սահմանված ապրանքատեսակների ցանկում ներառված՝ ԱՏԳ ԱԱ 940600 ծածկագիրը համապատասխանեցնել ԵՏՀ խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 80 որոշմամբ հաստատված ԱՏԳ ԱԱ ծածկագրին,

5) ԱՏԳ ԱԱ 1404 90 000 8 ծածկագրին դասվող՝ այլ (կոկոսի մանրաթելի սուբստրատ, հումքի տեսքով կոկոսի մանրաթելի և կեղևից առանձին կոկոսի մանրաթելի խառնուրդ, որը նախատեսված է տարբեր բույսերի աճեցման համար) ապրանքների ներմուծումն ազատել ԱԱՀ-ից,

6) հստակեցնել ԱՏԳ ԱԱ 88 ապրանքային խմբում ներառված թռչող ապարատների, տիեզերական ապարատների և դրանց մասերի ներմուծումն ԱԱՀ-ից ազատվելու հետ կապված դրույթները:

7. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազ-մավարություն 2050, Կառավարության 2021-2026 թվականների ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագիծը բխում է Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 6.8-րդ «Հարկաբյուջետային քաղաքականություն» մասով սահմանված քաղաքականության ուղղություններից, ըստ որի՝

- Կառավարությունը նպատակ ունի ապահովել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավում առնվազն 2.6 տոկոսային կետով՝ 2026 թվականին հարկեր/ՀՆԱ ցուցանիշը հասցնելով առնվազն 25 տոկոսի,
- հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունն ու հասցեականությունը բարձրացնելու և այդ ռեսուրսները հանրօգուտ ու համապետական նշանակություն ունեցող ծրագրերի վրա ծախսելու, ինչպես նաև հարկաբյուջետային կայունությունն ապահովելու նպատակով քայլեր են իրականացվելու հարկային եկամուտների ընդլայնման ուղղությամբ: